

ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԵՎ ՔՆՆԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ՄԱՍԻՆ

Բուլղարիայի հայ մամուլն ունի ավելի քան յոթ տասնամյակների պատմություն: Իր գոյության ամբողջ ընթացքում այն նշանակալից դեր է կատարել հայ գաղութի հասարակական կյանքի և երիտասարդ սերունդը հայրենասիրական ոգով դաստիարակելու գործում: Բուլղարահայ մամուլի այս պատմական դերի գնահատմանն է նվիրված ներսես Գասաբյանի «Բուլղարիայի հայ մամուլի սկզբնավորումն ու զարգացումը» ուսումնասիրությունը, որը բուլղարերեն լեզվով լույս է տեսել Սոֆիայում, էլին Պելինի անվան բիբլիոգրաֆիական ինստիտուտի տարեգրքում¹:

Ն. Գասաբյանի վկայությամբ, բուլղարահայ առաջին պարբերական «Հուլյս» շաբաթաթերթը լույս է տեսել Վառնայում, 1884 թվականի հունվարի 4-ին: Թերթի կազմակերպիչ ու խմբագիր ռումինահայ իրավաբան Անդրանիկ Յոանեսկուն «Հուլյսի» բոլոր 40 համարներն էլ տպագրել է լատինատառ հայերենով, նպատակ ունենալով օտարականներին ևս հաղորդակից դարձնել հայ մշակույթին ու հայ գաղութի հասարակական կյանքին: Սակայն «Հուլյսը» չի վայելում ժողովրդի սերն ու աջակցությունը:

Վառնայի երիտասարդական Հայրենասիրական Միության նախաձեռնությամբ 1885 թվականի ընթացքում նույն քաղաքում հրատարակվում է «Բրավունք» եռօրյա թերթը: Հետագայում Ռուսճուբում լույս է տեսնում «Դանուբ» (1891—1892) լրագիրը: Այս երկու պարբերականներն էլ եղել են 80—90-ական թվականների բուլղարահայ երիտասարդության հայրենասիրական մտորումների արտահայտիչները:

Այնուհետև հեղինակն անցնում է այդ մամուլի զարգացման նոր էտապին: 1895—96 թվականներին Թուրքիայում հայկական ջարդերի ու հալածանքների հետևանքով հայ տարագիրների մի զգալի մասը ապաստան է գտնում հյուրընկալ Բուլղարիայում: Վառնայում են հաստատվում պոլսահայ գրողներ, հրապարակախոսներ, տպագրիչներ, դերասաններ: Այս շրջանում Վառնայում սկսում են լույս տեսնել հայ քաղաքական խմբավորումների, առավելապես դաշնակցական և հնչակյանների՝ թերթեր, իսկ հետագայում նաև Ռուսճուբում հրատարակվող «Վերածնունդը» (1904): Վերջինս աշխատավորների մեջ սոցիալիստական գրականություն տարածելու համար իր ժամանակին արժանացել է Ստ. Շահումյանի քաջալերանքին:

Այս կուսակցական օրգանների հետ զուգընթաց աշխատության մեջ հիշատակված են քաղաքական հոսանքներից իրենց «անկախ» հայտարարող մի շարք թերթեր ու հանդեսներ, որոնց առաջնահերթ խնդիրն է եղել հայ տարա-

¹ Н. К а с а б я н, «Начало и развой на арменския печат в България». Родишник на Българския Библиографически институт Елин Пелин, т. VI, 1959, София.

գիրները մեջ լուսավորություն տարածելու գործը։ Այսպիսի պարբերականների շարքին հեղինակը հիշատակում է «Իրավունքը» (1896—1911), «Խուլակը» (1897—1898), գրական «Վիպաթերթը»-ը (1904—1906), «Կատակ» (1897) և «Հայկի» (1897—1902) երգիծաթերթերը և այլն։

Հետագա մի քանի տասնամյակների ընթացքում Բուլղարիայում, Կուսակցական պայքարը հրահրող թերթերից են ուսման արձանների «Փարոսը» (1929—1945), հնչակյանների «Բալկանյան մամուլը» (1931—1943), դաշնակցականների տիրահաղակ պարտիայի խոստովող «Աղատ խոսքը» (1932—1944)։

Ն. Դասաբյանի ուսումնասիրության մեջ հատուկ ուշադրություն է նվիրված նաև բուլղարահայ առաջադիմական մամուլի զարգացմանը։ «Սոցիալիստական ազատ մամուլ ունենալու գաղափարը տարիներ շարունակ զբաղեցրել է Բուլղարիայի հայ առաջավոր երիտասարդությանը»—գրում է հեղինակը։ 1920 թվականի ամռանը Պլովդիվ քաղաքի հայ կոմունիստների նախաձեռնությամբ լույս է տեսնում «Նոր հոսանք» կոմունիստական խմբրատիպ թերթի միակ համարը։ Նույն տարվա «սեպտեմբերին»¹ սկսում է հրատարակվել «Կարմիր լուրեր» ամսաթերթը, որը հանդիսանում է բուլղարական կոմունիստական պարտիային կից հայկական խմբի հայերեն օրգանը։ «Կարմիր լուրերը» ջերմորեն արձագանքել է Սովետական Հայաստանի սոցիալիստական շինարարությանը, ինչպես նաև տպագրել է միջազգային բանվորական շարժմանը վերաբերող հաղորդագրություններ։ 1921 թվականի վերջերին «Կարմիր լուրերը» դադարեցվում է, բայց մի քանի ամիս հետո կրկին կյանքի է կոչվում «Նոր աշխարհ» (1922—1923) անվան տակ։ 1923 թվականին Բուլղարիայում գլուխ բարձրացնող բուրժուա-ազգայնական ղեկավարի ոչ միայն բռնագրավում է թերթը, այլև զազանաբար զնդակահարում Բուլղարիայում կոմունիստական շարժման ականավոր գործիչ և վերահիշյալ թերթերի պատասխանատու խմբագիր Ստեփան Շահբազյանին։

Հետագայում սոցիալիստական պարբերական մամուլ ունենալու բոլոր փորձերը ձախողվում են։ Ն. Դասաբյանի բերած փաստերից պարզվում է, որ այդպիսի թերթերի առաջին իսկ համալսերը ոստիկանության կողմից բռնագրավվել են, իսկ նախաձեռնողները ենթարկվել հալածանքի ու աքսորի։

1944 թվականի սեպտեմբերի 9-ին Բուլղարիայում հաստատվում է ժողովրդական իշխանություն։ Բուլղարահայ իտալանության մեջ վերջ է դրվում գաղութի ուժերը ջլատող զանազան խմբավորումներին ու նրանց օրգաններին։ Ստեղծվում է մեկ միասնական «երևան» մշակութային միությունը, և նույն տարվա դեկտեմբեր ամսից Սոֆիայում հրատարակվում է այդ միության օրգան «Երևան» թերթը։ Մինչև այսօր էլ «Երևանը» հանդիսանում է բուլղարահայ սոցիալիստական մամուլի լավագույն ավանդությունների շարունակողն ու հայ աշխատավոր դանդաժներին հայրենիքի հետ կապող միակ թերթը։

Ն. Դասաբյանի այս աշխատությունը բազմաթիվ ճշգրտումներ ու լրացումներ է մտցնում թե՛ Գ. Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը» աշխատության, և թե՛ Հովհ. Պետրոսյանի վերջին տարիներում լույս տեսած «Հայ պար-

¹ Անհրաժեշտ ենք համարում նշել, որ այս թվականը չի համապատասխանում իրականությանը։ Մեր ձեռքի տակ է Ռ. Խաչատրյանի «Արտասահմանի հայ կոմունիստական մամուլի պատմությունից» աշխատությունը։ Դրքի 67-րդ էջում տպագրված է «Կարմիր լուրեր» թերթի առաջին համարի ֆոտոպատճենը։ Այնտեղ թերթի ճակատին նշված է թիվ 1, 15 հուլիսի, 1920»։

բերական մամուլի լիբերոգրաֆիա» մեծածավալ հատորների մեջ, Բավական է նշել միայն, որ եթե Գ. Լևոնյանը 1884 թվից մինչև 1934 թվը նշում է 40 անուն լուղարահայ պարբերական, իսկ Հովհ. Պետրոսյանը 1884 թվից մինչև 1956 թվը՝ 61, ապա Ն. Գասաբյանը այս նույն ժամանակաշրջանի համար հիշատակում է 72 անուն, Ըստ Ն. Դասաբյանի վերջերս կազմած բիբլիոգրաֆիական մի ցուցակի, այդ թիվը հասել է 73-ի:

Իր անժխտելի գրական կողմերով հանդերձ, Ն. Դասաբյանի ակնարկների այս բաժինը զերծ չէ որոշ թերություններից:

Անցյալում Բուլղարիայի հայ գաղութի հասարակական միտքը աչքի է ընկել զանազան սոցիալ-քաղաքական խմբավորումների սուր հակամարտություններով: Այդ պայքարը իր արտացոլումն է գտել հատկապես կուսակցական մամուլում: Այս օրգանները տոն և ուղղություն են տվել գաղութի ամբողջ հասարակական կյանքին և իրենց կրքոտ պրոպագանդայով թափանցել են նույնիսկ հեղինակի կողմից «անկախ» ճանաչված մի շարք թերթերի էջերը: Հետևաբար, լուղարահայ պարբերական մամուլի զարգացման մասին գրված այս ակնարկներում անհրաժեշտ էր, որ հեղինակը լուղար ընթերցողի առաջ պարզեր հայ կուսակցական օրգանների քաղաքական գեմքը և լացահայտեր նրանց գաղափարական բախումների իսկական պատճառները: Աշխատության մեջ ոչ մի տեղ չի նշված, որ բուլղարահայ սոցիալիստական մամուլը սկզբունքային պայքար է ծավալել մի կողմից մանրբորժուական թերթերի ազգային սահմանափակության և հայ աշխատավորների շահերի հանդեպ անհետևողական քաղաքականության դեմ, մյուս կողմից հայ ժողովրդի և նրա վերածնված հայրենիքի՝ Սովետական Հայաստանի թշնամի՝ դաշակցական օրգանների թմբկահարած ցեղակրոնական-նացիստական գաղափարախոսության դեմ: Հեղինակը շրջանցել է այս պատմական իրողությունը և ընթացել փաստական նյութի արձանագրական շարադրանքի ճանապարհով:

Ն. Դասաբյանի աշխատության երկրորդ բաժինը նվիրված է Բուլղարիայում հայերեն գրքերի հրատարակության համառոտ պատմությանը:

Չնայած հայերեն առաջին երկու գրքերը Բուլղարիայում տպագրվել են 1885 թվականին, սակայն, հայ գրքի հրատարակությունը վերելք է ապրում հատկապես 1896 թվականի դեպքերից հետո: Ըստ Ն. Դասաբյանի պրպտումների, 1885 թվականից մինչև մեր օրերը Բուլղարիայում հրապարակվել են ավելի քան 432 անուն հայերեն գրքեր: Այդ գրականության զերակշռող մասը գեղարվեստական գրքեր են: Կան նաև սոցիալ-քաղաքական, մեմուարային, պատմական, ուսումնա-մանկական և այլ ընդլայն գրքեր:

Նշված ժամանակաշրջանում Բուլղարիայում տպագրվել են Ա. Արփիարյանի, Բաֆու, Հ. Պարոնյանի, Ե. Օտյանի, Ե. Սրմաքեշխանլյանի և այլ հեղինակների աչքի ընկնող ստեղծագործությունները:

Բուլղարահայ մտավորականությունը հաղորդակից է եղել նաև եվրոպական և ռուս կլասիկ գրականության լավագույն երկերին: Հայերեն լեզվով առանձին գրքերով լույս են տեսել Մ. Գյուրկու, Մովսեսի, Ժյուլ Վեռնի, Ֆրանց Վերֆելի, Ալ. Դյումայի, Հ. Սենկևիչի, Ժորժ Սանդի, Մոպսանի, Անդերսենի, Գրիմմ եղբայրների և այլ նշանավոր գրողների երկերը:

Բուլղար ընթերցողի բնական հետաքրքրությունը լավարարելու համար Ն. Գասաբյանը իր ուսումնասիրության մեջ բերել է Ռուսաստանում և այլ

երկրներում բուլղար գրականությունից հայերենի թարգմանված գրքերի մի ընդարձակ ցուցակ³։ Այս տեսակետից արժանի է Ս. Պետերբուրգի հայ ուսանողների նախաձեռնությունը։ Անցյալ դարի 80—90-ական թվականների ընթացքում նրանք թարգմանել և հրատարակել են բուլղար ուսուցիչներ գրողներ՝ Լյուբեն Կարավելովի հայերենասիրական վիպակները և Զախարի Ստոյանովի՝ բուլղար ժողովրդի ազատագրական պայքարի լեգենդար հերոսներին նվիրված մեմուարային ստեղծագործությունները։

Բուլղարահայ գրական աշխատողները թարգմանել և առանձին գրքերով լույս են ընծայել նշանավոր գրողներ՝ Խրիստո Բոտևի բանաստեղծությունները, Ալ. Կոստանդինովի «Բայ Գանյու» սատիրական ստեղծագործությունը, Ստ. Կոստովի «Գուշակ» վիպակը, էլին Պելինի պատմվածքները։

Թարգմանական գործերի շարքին Ն. Գասարյանը ըստ արժանվույն հիշատակում է բուլղար անվանի պոետ՝ Պելյու Յավորովի «Հայեր» (1900) հանրահայտ բանաստեղծությունը, որը, Ն. Գասարյանի վկայությամբ, մինչև 1959 թվականը ունեցել է ընդամենը 6 թարգմանություն⁴։

Այսպիսով, ընդհանուր հանրագումարի բերելով իր ուսումնասիրության արդյունքները, Ն. Գասարյանը եզրակացնում է, որ հայ ժողովրդի ամենամոռյալ օրերին իսկ, բուլղարահայ մամուլի առաջադիմական մասը ձգտել է տարագիրների մեջ վառ «պահել հավատը դեպի լուսավոր ապագան»։ Հատկապես մատաղ սերնդի դաստիարակության, լուսավորության և օտարախոս հայերին մայրենի լեզվի հարազատ գիրկը վերադարձնելու նվիրական գործում այդ մամուլը նշանակալից դեր է կատարել։

Մեր կարծիքով, փաստերով հագեցված այս աշխատությունը արժեքավոր ավանդ է հայ ժուռնալիստիկայի և գրականության բիբլիոգրաֆիայում։

Կ. Հ. ՃԻՆԳՈՋՅԱՆ

3 Ս. Պետերբուրգի հայ ուսանողների բուլղար գրականությունից թարգմանած ու հրատարակած գրքերի շարքին Ն. Գասարյանը հիշատակում է նաև «Մենաքեմ Գամաղացու պատմությունը բուլղարների մասին» վերնագրով ինչ որ գրքի անուն։ Մեղ թվում է, թե Ն. Գասարյանը օգտվել է ոչ ճիշտ աղբյուրից։ Բուլղար գրականության մեջ չկա այդպիսի աշխատություն։ Թյուրիմացությունը կպարզվի, եթե այդ վերնագիրը բաժանենք երկու մասի։ Առաջինը՝ «Մենաքեմ Գամաղացու պատմությունը» պատմվածքը պատկանում է ուսն նշանավոր գրող Վլ. Կորոլենկոյի ղրչին։ Այստեղ պատկերված է հռոմեական կայսր Ներոնի բռնակալության դեմ հրեաների մղած ազատագրական պայքարը։ Հայերենի թարգմանված այս երկը («Մենաքեմ Գամաղացու պատմությունը» Վլ. Կորոլենկոյից, Ս. Պետերբուրգ, տպ. Ի. Ն. Սկորոխոգովի, 1888, էջ 59) ոչ մի աղբյուրում չունի բուլղար ժողովրդի պատմության հետ, հետևաբար այն չպետք է տեղ գտներ այս ցուցակում։ Ինչ վերաբերում է Ն. Գասարյանի նշած ղրքի վերնագրի երկրորդ մասին, ապա պիտի ասել, որ այդ անունով էլ կա առանձին գրքույկ («Բուլղարների մասին», Ս. Պետերբուրգ, տպ. Ի. Ն. Սկորոխոգովի, 1888, էջ 43), որը իսկապես մի համառոտ ակնարկ է բուլղար ժողովրդի պատմական անցյալի մասին։

4 Այս կապակցությամբ տողատակում բերված ցուցակը մեր կարծիքով թերի է և որոշ ճշտումների ու լրացումների կարոտ։ Ըստ Ն. Գասարյանի «Հայեր»-ի առաջին թարգմանությունը Սոֆիայի «Հայաստան» շաբաթաթերթի 1915 թվի 10-րդ համարում տպագրված ազատ փոխադրությունն է։ Այն ինչ, հայ ժողովրդի տառապանքը մարմնավորող այս պոետական հուշարձանը առաջին անգամ թարգմանել է պլովդիվահայ իրավաբան Ստ. Հինդլյանը և տպագրվել է 1909 թվին, Վ. Թեթլյանի «Շիրակ» հանդեսում։ «Տե՛ս բուլղարահայ «Փարոս» թերթի 1933 թվականի նոյեմբերի 4-ի համարը)։ Բացի այդ, Ն. Գասարյանի ցուցակում չի նշված Հր. Հրահանի թարգմանությունը, որը ղրդը կատարել է 1947 թ. և տպագրվել է նույն տարվա «Գրական թերթ»-ի մայիսի 1-ին համարում։